

L'ALUMINIUM EN ARMÉNIE.

Etude Géologique et Industrielle,

Préface en français.

par G. J. AGABABIAN.

Ingénieur Civil des Mines, E. M. P. (Paris).

ԱԼԻՒՄԻՆԻԹՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ:

ԳՐԻԳՈՐ Ց. ԱՂԱԲԱԲՅԱՆ

Հանքերի քաղաքացիական Ծարտարագէտ, E. M. P. [Paris].

Աշխատակից La Revue Pétrolifère եւ որիշ մասնագիտական Հանդէսների, երկրաբան Հիմնարկութիւնների, Ամերիկական, Փրանսական ընկերութիւնների եւ այլն:

1935.

Գիրքը պետք է վերադարձնել
այստեղ նշված ժամկետից ոչ ուշ

ի եջ ՏՊԱՐԱՆ
Ո, ԹԵՂՐԱՆ

nu, Տպարանում

L'ALUMINIUM EN ARMÉNIE.

Etude Géologique et Industrielle,

Préface en français.

par G. J. AGABABIAN.

Ingénieur Civil des Mines, E. M. P. (Paris).

ԱԼՒՄԻՆԻՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՐ:

ԳՐԻԳՈՐ Յ. ԱՂԱԲԱԲՅԱՆ

Հանքերի քաղաքացիական Ծարտադրագէտ, E. M. P. [Paris].

Աշխատակից La Revue Pétrolifère եւորհց մասնագիտական Հանդեսների, երկրաբան Հիմնարկութիւնների, Ամերիկական, Փրանսական ընկերութիւնների եւ այլն:

1935.



L'Aluminium en Arménie

Préface.

L'objet du présent travail est d'attirer l'attention sur les ressources insoupçonnées de l'Arménie en minerais d'aluminium et d'en étudier, plus particulièrement, les riches affleurements alumino-potassiques que présente la région centrale des célèbres mines de cuivre, dans le Zanghézour. Restés inconnus jusqu'à 1932,—date de ma première communication à leur sujet,—ces affleurements de coulées éruptives de leucite cristallisée massive y couvrent, au minimum, cinq kilomètres carrés de superficie, avec une épaisseur d'une centaine de mètres. Des stocks apparents de l'ordre de 1.225.000.000 tonnes de leucite, ou de 148.000.000 tonnes d'aluminium et de 245.000.000 tonnes de potasse, correspondent à ces données superficielles, dans des conditions favorables d'exploitation et avec les possibilités immédiates suivantes:

1. Extraction des minerais par carrières à ciel ouvert;
2. Traitement d'environ 150.000 tonnes de minerais, par an, à l'aide de l'acide suflurique à fabriquer avec près de 50.000 tonnes de soufre que les mines contigues de cuivre gaspillent an-

nuellement, en pure perte; l'utilisation de ce soufre assurerait une production économique de l'ordre de 15,000 tonnes d'aluminium et de 30,000 tonnes de potasse par an;

3. Présence de près de 500,000 kilowatts de puissance hydraulique disponible, dans de bonnes conditions d'aménagement et de transport;

4. Jonction par chemin de fer en exploitation avec Bacou et d'autres grands centres.

Dans la partie géologique de ce travail, sont étudiés, d'après mes observations personnelles: la tectonique du dôme du Bas Capan, ses effondrements, ses éruptions alumino-potassiques et autres, ses richesses filonniennes, ainsi que les importants affleurements alumineux du Sessian, avec leurs réserves apparentes de l'ordre de 1,300,000,000 tonnes de kaolin et de terre de faïence; sa partie industrielle est consacrée à l'exposé des méthodes actuelles du traitement des leucites, aux fabrications synthétiques connexes (acide nitrique, engrais composés etc), aux forces hydraulique de la région, à l'historique des exploitations de cuivre du Bas Kapan, à l'état actuel de ces dernières etc.

La conclusion générale à tirer de cette étude est que l'aluminium constitue la grande richesse minière méconnue de l'Arménie.

G. J. Agababian.

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն.

Օդագնացութեան և աւտօմոբիլիզմի ներկայ դարում, կարելի է առանց մարզաբէանալու նախատեսել, որ ալիւմինիումը կոչւած է Հայաստանի տնտեսական զարգացման գլխաւոր գործօններից մէկը լինելու, ինչպէս քարածուխը Ընդլիայի մէջ, պօտասսային աղերը շերմանիայի համար, նաևթը Բագւում և այլն։ Թեթե մետաղի արդիւնաբերական պաշարները միայն Ղափանումներկայացնում են, սկզբնական հաշւով՝ 148 միլիոն թոն մօտ 15 միլիարդ անգլ. պառնդ արժողութեամբ, որոնց ուղեկցում են 245 միլիոն թոնն պոտաս (Կ²Օ), մօտ 6 միլիարդ անգլ. պառնդ գումարի։ Խոկայդ հում նիւթերի աւելի խոշոր քանակութիւնները դիսես սպասում են ձեռնհաս և մանրամասն հետախուզութիւնների մեր երկրի ուրիշ մասերում։

Այդ պատկառելի թւերի համեմատութեամբ, խոդալիքների տպաւորութիւն են թողնում Հայաստանի աւելի քան համեստ արտազրութիւնները, ինչպէս պղինձ, խաղող, բամբակ, բարեր և այլն։

Եւ սակայն այդ հարստութիւնը մնացել էր բացարձակապէս անլայտ մինչև 1932 թիւը, երբ «Հայաստանի լեռսիտների» մէջ (սպառած հրատարակութիւն), ես առաջին անգամ արձանագրեցի նրա ընդարձակ բացւածքները 80 տարուց ի վեր մշակող պղնձահանքերի կենդրոնում։ Հետաքրքիր է, որ Ղափանի մետա-

դային գլխաւոր հարստութիւնը անծանօթ էր մնացել այդ շրջանի անզամ երկրաբանական-հանքային ստուար գրականութեան համար, որը ոչ մի լիշտակութիւն չէ պարունակում նրա մասին:

Տակաւին շարունակւում է մասնազիտական և հասարակական միացեալ ապաթիան (apathie) երկրի գիտական ուսումնասիրութեան լիշեալ նւաճման հանդէպ, որի շահագործումը սակայն ապահովւած պէտք է համարել շուկայի աճող պահանջներով, արտակրութեան նպաստաւոր պայմաններով և ճարտարարւեստի նորագոյն կատարելագործութիւններով:

Վերջիններից առանձին ուշադրութեան արժանի են Խտալական և Փրանսական ուսումնասիրութիւնները և արտօնագրերը (brevets), ինչպէս նաև, մասնաւորապէս, խտալական նոր կառուցումները լիուսիտի մշակութեան համար:

Յիշեալ աշխատանքների շնորհիւ, Ղափանի ալիւմինա-պոտասսային արդիւնաբերութեան համար տեխնիկապէս հողը արդէն պատրաստւած է: Վերջին խօսքը նըա իրականացումների մասին կախւած է երկրի գործող ուժերից, կամ տնտեսական զարգացման երկաթի օրէնքներից:

Զարմանալի է, որ, ոչ շատ հեռաւոր անցեալում, նման մի անաարբերութիւն իշխել է մեր երկրի տնտեսութեան պոտենցիալ ուրիշ մի գործօնի, այն է, նրա մի քանի միլիոնն ձիի ուժերի հասնող ջրային

զօրութեան (puissance) նկատմամբ: Մինչև 1921 թիւը և աւելի ուշ, այդ զօրութիւնից օպտագործում էր ջրէլեռտրականների միջոցով հաղիւ 2500 ձիի ոյժ, ու ըից 90% Փրանսական ընկերութեան պղնձահալերում (fonderie de cuivre).

Ալիւմինա-պղոտասսային զարգացումների տեսակէտից, բնորոշ երեսլիթներ պէտք է համարել ջրային էներգիայի այս անհշան շահագործումը, հասարակութեան բացարձակ արհամարհանքը դէպի հարստութեան այդ մեծ աղբիւրը, Honoris causa անհատական վերագրումները յետազայ կառուցումների առթիւ և այլն: Հետաքրքիր տւեալներ է տրամադրում այդ ուղղութեամբ նախքան լիշեալ թիւը կատարւած ուսումնասիրական և պատրաստական աշխատանքների ժամանակագրական հետեւալ ցուցակը:

1. Փամբակ զետ, Կովկ. ջրային Վարչութեան նախաձեռնութեամբ,

2. Կամենկառչնեվան զետ, իմ նախաձեռնութեամբ,

3. Սևանայ լիճ, Աղստեի ուղղութիւն, մասնաւոր նախաձեռնութեամբ,

4. Հայաստանի 29 զետերի առաջին ընդհանուր ուսումնասիրութիւն, իմ հեղինակութեամբ,

5. Սևանայ լիճ, Զանգուի ուղղութիւն և երեք զետեր, պետական նախաձեռնութեամբ:

Նախընթաց ուսումնասիրութիւններից, իմ նա-

Խաձեռնութեամբ սկսւած են 1909 թւին և տար-
տւած 1916 թւին Կամինկա-Հնեվան գետի (2) ստո-
րին սըլնթացքների նախապատրաստական աշխատանք-
ները, որոնց թւում շահագործման մանրամասն երեք
նախադիմներ, մշակւած պալ. Arnaud, Taris և յար-
կելի ուրիշ ճարտարագէտների մասնակցութեամբ։
Մակղծագործական այդ խոշոր աշխատանքը մնաց ա-
ռանց իրականացման պատերազմական անցքերի պատ-
ճառով, բայց, յետագայում, նա օգտագործւեց Զորագէս
կոչւած ջրէկերտրականի կառուցման համար ժինոյն
սըլնթացքների վրա։

Նոյնագէս իմ հեղինակութեամբ է արւած Հայաս-
տանի քսան իննը գետերի ջրային գորութիւնների
ընդհանուր առաջին ուսումնամիբութիւնը (4), որը գե-
կուցւեց 1917 թւին Թիֆլիսի Հայոց Տեխն. Ընկերու-
թեան ժողովներին։ Գրականութեան մէջ, այդ աշխա-
տանքի ամփոփումները հրատարակւեցին առանձին
բրոցիւրով, The Asiatic Review (April 1920) և The
Near East (August 26, 1920) հանդիսներում, Ապա-
գայ (7 ապրիլ 1923, 1—8 մարտ 1924) և ուրիշ օրա-
թերթերի մէջ։

Թիֆլիսում, յիշեալ զեկուցումը առարկայ եղաւ
բուռն բողոքների պետական ճարտարագէտների կող-
մից, որոնց ենթադրութեամբ Հայաստանի գետերի
փոքր զօրութիւնը չէր կարող 150,000—170,000 ձի՛
ուժերից աւելի լինել։ 1919—1920 թւերին, պաշտօ-

նական ենթագնահատութեան հիմքերը խախտւած լինելով քաղաքական անցըերից, մի խումբ յարգելի ճարտարագէտների միջոցով կատարւեցին նոր ուսումնասիրութիւններ և կազմւեցին նախադիծներ Սևանային, Զանգու, Քասախ և Ախուրեան գետերի շահագործման համար (5).

Եւ վերջապէս 1921—1922 թւերին, երկրի գործող ուժերի արմատական փոփոխութեամբ, փակւեց «ակադեմիական» ուսումնասիրութիւնների շրջանը, սկսւեց և շարունակում է մինչև ալժմ ջրէլեքտրականների պետական մի խոշոր շնորհարարութիւն, որի առաջին զարդերից մէջն է Զորագէսը (Կամենկա-Հնիվան):

Ջրէլեքտրական իրականացումների համեմատութեամբ, ալիւմինա-պոտասսային զարգացումները Ղափանում սահմանափակւած են իմ ուսումնասիրութիւնների անձնական շրջանակով: Նրանց առջիւ կրկնում է ապավիայր և ենթագնահատութեան աւանդական պատմութիւնը: Հետաքրքրիք է, որ մեր միջավայրի այդ բացասական վերաբերման հանդէպ, վերջերում, ալիւմինիումի առջե, ընդհակառակը, բացւել են համաշխարհային խոշօր սպառման նոր հօրիզոններ երկաթուղային և ուրիշ արգիւնաբերութիւնների մէջ:

Յայտնի է, որ ալիւմինիումի լայն սպառման գլխաւոր խոշընդուռը նրա թանկութիւնն է գործածական միւս մետաղների համեմատութեամբ, ինչպէս

ցոյց է տալիս Լոնդոնի միջին գների հիտեսալ ցուցակը (մայիս 1935)։

Ալիւմինիում, թոննը 100 անգլ. պառնդ

Պղինձ	>	32	>	>
-------	---	----	---	---

Պողպատ	>	3	>	>
--------	---	---	---	---

Սրդ, թեթև մետաղի արտադրութեան ուրիշ կենդրունների համեմատութեամբ, Դավիանը ներկայացնում է էական մի քանի առաւելութիւններ, որոնք կարող են թոյլ տալ նրան միւսներից աւելի աժան գնով արտադրել ալիւմինիումը համաշխարհային շուկայի համար։

Հայաստանի անցեալ տնտեսութիւնը հիմնած էր նրա երկրորդական հարստութիւնների (բամբակ, խաղող, պղինձ, քարեր և այլն.) պըթիմիտիվ շահագործումների վրա, գլխաւորները (ալիւմինա-պոտասսային պաշարներ, ջրային ուժեր) միանգամայն անլայտ մնացած և արտաքսւած լինելով նրա արտադրական սիստեմից (production system)։ Ծյգ հակագիտական կազմակերպութեան հետեանքներն էին. ընդհանուր արտադրութեան աննշան ծաւալը և արժեքը, բնակչութեան աղքատութիւնը, նրա գործունեայտարենքի փախուստը երկրից և բազմաթիւ այլ չարիքներ։

Երկրի վերակազմակերպւած արտադրութեան

ըացիոնալ սիստեմի մէջ, առաջին տեղերը պէտք է գրաւեն նրա գլխաւոր հում նիւթերը, այն է, նրա ալիւմինա-պոտասսային պաշարները և ջրային գօրութիւնները, խմբելով իրանց շուրջը բամբակը, պտուղները, պղինձը, քարերը, և այլն. և նրանց արդիւնաբերական մշակութիւնները, որպէս երկրուղական ճիւղեր:

Թւում է, որ արտադրութեան այս սիստեմի իրականացմամբ կարող են երաշխաւորել հնարաւոր ամենաբարձր maximum-ները երկրի ընդհանուր արտադրութեան և նրա բարեկեցութեան համար:

Ֆ. Յ. Ա.

ԱԼԻՒՄԻՆԻՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԶ:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԻԵՍԱՆԵՐ:

Հանքային արդիւնաբերութեան ալիւմինիումի և պոտասսի երբեմն աննշան ճիւղերը այսօր գրաւել են կարեռը տեղեր համաշխարհային տնտեսութեան մէջ. առաջինը, շնորհիւ օդագնացութիւնների խոշոր սպառելիքմի նորաստեղծ արտադրութիւնների խոշոր սպառումների, երկրորդը, որպէս ինտեհնով երկրագործութեան մէջ լայն գործածութիւն ունեցող պարագանացնող նիւթ: Ալիւմինիումի արդիւնաբերութիւնը ծնւել է մեր դարի սկզբին: Նրա տարեկան արտադրութիւնը հասնում է այժմ 300,000 թոննի 30,000,000 անգլ. պառնդ արժողութեամբ, առանց հաշւելու պաղլեղի (alun) և ալիւմինային ուրիշ արդիւնքների քանակները և արժէքները: Պոտասսի տարեկան արտադրութիւնն է 2,000,000 թոնն 50,000,000 անգլ. պառնդ արժողութեամբ: Արդիւնաբերութեան այդ ճիւղը սկսւել է 1861 թւին:

Հետաքրքիր է նկատել, որ յիշեալնիւթերի աճող սպառումը առաջ է բերել, յօդուտ նրանց արտադրող սակաւաթիւ հանքերի և երկրների, մի տեսակ մենափանու, որը առանձին կարեռութիւն ունի ալիւմինիումի դէպքում, վերջինի ռագմական գործածութիւնների պատճառով: Միացեալ նահանգները Ամերիկայում՝

Փրանսան, Գերմանիան, Դալմացիան, Հունգարիան,
Եւրոպակում, Հնդկաստանը Սոխայում, բաժանում են
յիշեալ առաւելութիւնը իրանց բոկսիտներով։ Տեղա-
կան և արտասահմանից բերող նիւթերով են գործում
Դնիեպրի և Վոլխովի նորաստեղծ էլեկտրօ-հալերը Ռու-
սաստանում։

Պոտասսի եւրոպական արտադրութիւնը կենդըռ-
նացած է Գերմանիայի և Փրանսայի մէջ, որոնց հոչա-
կաւոր հանքերը, իրանց կայինիտներով, կարնալիտնե-
րով և անմիջապէս իւրացւող (assimilable) պոտաս-
սային ուրիշ պարագատացուցիչներով, իշխում են հա-
մաշխարհային շուկայի վրա։ Վերջինների դէմ նորե-
րում մրցութիւն են սկսել Ստերլիտամակի ուստական
աղանանքերի պոտասսային պարագատացուցիչները։

Ելիւմինիումի և պոտասսի արդիւնաբերութիւն-
ների մէջ ստեղծւած բացառիկ զրութիւնը հետեանը
է ոչ յիշեալ նիւթերի բնական սակաւութեան, այլ լոկ
նրանց ներկայ մշակութեան տեխնիկական սահմանա-
փակ մեթոդների, որոնք անգործադրելի են հանդիսա-
նում բոկսիտի և ուրիշ մի քանի միներալների շրջա-
նակից դուրս։ Դասական դարձած մեթոդների անբա-
ւարարութեան պատճառով, ալիւմինիումի և պոտասսի
առատօրէն տարածւած բազմաթիւ միներալներ ար-
տաքսւած են տնտեսական շրջանառութիւնից ի վնաս
յիշեալ արտադրութիւնների լայն զարգացման։

Այդ միներալներից, լեռսիտ կամ ամֆիկեն անուն-

ներով յայտնի մի Փելղսպաթիդ, որը պարունակում է միաժամանակ ալիւմին և պոտասս, դարձել է վերջեցրում առաջկայ արդիւնաբերական մշակման նրա ամենահոչակաւոր հանքավայրերը Եւրոպայի մէջ գտնւում են կենդրոնական Խամբախյում, Փլորա գետից մինչև Վեզուվը տարածւող Քոկկա Մօնֆինա և այլ հրաբխային շրջաններում: Բայտ պրօֆ. C. Matignon-ի և Washington-ի, այդ հանքավայրերը պարունակում են մօտ 11 միլիարդ թոնն ալիւմին և մօտ 8,700 միլիոն թոնն պոտասս, այն է, յիշեալ արդիւնաբերական նիւթերի համաշխարհային ամենամեծ պաշարները:

Հեռութիւն մի ուրիշ հանքավայր գտնւում է Հայաստանում: Նրա ընդարձակ և մասսիվ բացւածքների [affleurements] խոշոր և դեղեցիկ բիւրեղները պատահմամբ գրաւեցին իմ ուշադրութիւնը մի երկրաբանական-հանքային աշխատանքի ընթացքում 1902 թիւն, երբ այդ միներալը գեռես չ'ունէր որ և է գործածութիւն: Այսօր, գիտութեան հրաշքով, ալդ հանքավայրը ներկայացնում է բնական մի կարեոր հարստութիւն, որի առջե տեխնիկական մեթոդների էվոլյուցիան, շահագործման նպաստաւոր պայմանները և մեծածախս մի յատուկ երկաթուղագծի կառուցումը (Յագու-Զուլֆա գիծ, Մինչեան-Հալեր ճիւղ) բացել են արդիւնաբերական լուրջ կարելիութիւններ: Հեռութիւն բացւածքների հեռաւորութիւնը այդ երկարուդաց երկու քիլոմետր է Կավարտ գետակի ձորով, և չորս քիլոմետր Խալաճ-Բայդաղ գետի հովտով:

II.—ԲՆԱԿԱՆ ԲԱՑԻԱԾՔՆԵՐ

Լեռսիտի բացւածքները զրաւում են, Զանգեղութի մէջ, Մտորին Ղափանի հոչակաւոր պղնձահանքերի շրջանի կենդրոնական մասը: Նրանք շրջապատած են Կավարտ, Ղաթար, Բարաբաթում, Խալաճ և Նորաշենիկ գիւղերի հողերով, և ցրւած են մօտ հինգ քիլոմետր երկարութեան վրա, սկսած Գեղանան-Խալաճ-Բայդաղ գետից և Խալաճի պղնձահանքերից մինչև Կավարտ գետակի մի փոքրիկ ջրվէժը, որը գտնւում է «Նուրի բաղ» կոչւած վայրից վերե, Նախկին Ղաթարի ընկերութեան հանքերի սահմանակէտի դէմ: Այդ բացւածքները շարունակւում են բուսականութեան և մացառուտների մէջ, թէ միննօյն գծով, Գեղանան-Խալաճ-Բայդաղ գետի ձախակողմեան բլուրների վրա, թէ խաչաձև ուղղութիւններով, Խալաճի հանքերից դէպի վերի և ներքեւ:

Ընդհանուր առմամբ, Խալաճի շրջանը համապատասխանում է լեռսիտային հոսանքի ամենահետաքրքիր մասերին, ըստ հարստութեան և ըստ տարածման: Նրա կենդրոնական մասը կազմւած է բիւրեղացած (cristallisée) մասսիվ լեռսիտից, պերփերիկ ծայրերում երիւմ են լեոկօ-տեֆրիտներ (leuco-téphrites). Միննօյն հոսանքի հարաւարենմտեան ծայրին, Կավարտ գետակի եզերը բացւածքում, «Նուրի Բաղից» ոչ հռու, երեւմ են լեռսիտայներ (leucitites), լեռսիտի խոշոր և մանր բիւրեղների գերակշռութեամբ:

Հեռսիտների հօրիզոնական տարածման սահման՝
ները և մակերեսոյթը ճշտիւ որոշելու համար, անհրա-
ժեշտ են երկրաբանական և երկրաչափական աշխա-
տանքներ: Նրանց տարածման մօտաւոր մակերեսոյթը,
ըստ իմ հետևած բնական բացւածքներին, կարելի է
հաշւել ոչ պակաս քան հինգ քառակուսի կիլոմետր:

Եղյն հանքավայրի միջին հաստութիւնը, կամ
վերտիկալ տարածումը, որոշելու համար անհրաժեշտ
են հետախուզական փորումներ (sondages), քանի որ
բնական բացւածքները չեն հասնում լեռսիտային զան-
գւածի պատւանդանին: Ալդ հաստութեան երեացող
մասը Խալաճի հանքերի մօտ լիսուն մետրից աւելի է:
Նա առաւել ևս մեծ է ալդ հանքերից գէպի հարաւ-
արևմուտք ընկած բացւածքների մէջ: Վերջինների մի-
ջին բարձրութիւնը Խալաճ-Բայդաղ գետի մակերեսու-
թից, հանքերի տակ, կարելի է հաշւել, առնւազը, հա-
րիւք մետր: Բացւածքների ճիշտ բարձրաչափութիւնը
պէտք է որոշվի երկրաչափական աշխատանքներով:

Սյս ընդարձակ հանքավայրի բաց և ծածկւած
մասերի մանրամասն ուսումնասիրութիւնը կարող է
կատարել միայն հանքային խուզաբարկութիւնների և քի-
միական և համապատասխան ալլ հետազօտութիւննե-
րի օգնութեամբ:

Հանքային աշխատանքների տեսակէտից, բաց-
ւածքների տեղադրութիւնը նպաստաւոր պայմաններ
է ներկայացնում բաց քարհանքների արժան մեթոդի

գործադրութեան համար: Բացի այդ, Ղափանի հանքա-
վայրի մասսիվ ընաւորութիւնը ազատում է նրան
մազնիսական կամ ուրիշ հարստացումների անհրաժեշ-
տութիւնից, մինչդեռ Խոալական լեռսիտները, առանց
բաժանւելու իրանց բաղալտային խառնուրդներից,
չեն կարող գործածւել:

III. ԵՐԿՐԱԲԸՆԱԿԱՆ ՏԻԵՍԼՆԵՐ.

Ստորին Ղափանի տեղազրութիւնը համապատասխանում է տաշտածն մի խոր տարածութեան (cuvette) մօտաւորապէս 20 քիլոմետր լայնութեամբ և 30 քիլոմետր երկարութեամբ, շրջապատւած ամեն կողմերից սեպածն ժայռերի և բարձր լեռնաշղթաների գօտիով:

Մյդ լեռնային պարիսպը կտրւած է երկու նեղ և խոր կիրճերով, որոնք տեղական բարբառով անւանում են կապեր: Հաւանական է, որ գաւառի Կապան կամ աղաւաղւած Ղափան անունը առաջ եկած լինի այդ բառից: Ցամենայն դէպքում, այդ կապերից մէկով՝ Ղափան-Օխչի-Հղուր-Զաւեդուր գետը Վերին Ղափանից իջնում է յիշեալ գաւառի մէջ և միւսով. վերջինի ջրերի հետ միասին, հոսում է դէպի Սրաքսը, կազմելով այդ շրջանի հազորդակցութեան գլխաւոր ճանապարհը արտաքին աշխարհի հետ:

Յիշեալ տաշտածն տեղազրութիւնը մնացորդն է երրորդական և աւելի հին շերտերի ալպիական ծալւածքների սիստեմին պատկանող մի խորտակւած գմբէթի (dôme ou brachy-anticlinal), որը կամարի ձևով տարածւած է եղել, ներկայ տաշտածն խորութեան փոխարէն, Խուստուփից մինչև Խոտանանի լեռները, Կարմիր քար և զուշան լեռնաշղթայից մինչև Ջահարջիկի բարձրութիւնները: Այսօրւայ Ղափանի այդ բարձր լեռնաշղթաները նախկին աւելի ես բարձր գմբէթի թեսելն են, կամ, աւելի շուտ, վերջինների ստո-



ըին մասերը, որոնք համեմատաբար խուսափել են տեկտոնական և ատմոսֆերային աւերռւմներից, մինչդեռ գմբէթի կենդրոնական մասը անհետացել է շնորհիւ ջրերի մեխանիկական և քիմիական գործունէութեան։ Թների պահպանւած մասերի մէջ շերտերի դասաւորութիւնը ներկայացնում է grosso modo գմբէթային կամ անտիկլինալ կառուցւածքին լատուկուղղութիւններ և խոնարհումներ (directions et inclinaisons)։

Աւելի բարդ պատկեր է ցուցազրում նոյն տաշտի կամ գմբէթի կենդրոնական մասը, որը, ևնթարկւած լինելով բարձրացման ամենաուժգին լարումներին, թեերի համեմատութեամբ, կազմում է դիմադրութեան մի աւելի թոյլ շրջան։ Լարումների զադարումից յետոյ, այդ թոյլ շրջանում հն կատարւել վիթխարի գմբէթի խորտակման ամենաբուռն երեսյթները, զլխաւոր և երկրորդական ճեղքումներ, ճեղքւած մասերի անհաւասար շարժումներ, հալւած ներքին մագմայի (magma) ժայթքումներ զլխաւոր ճեղքերով, ժայթքումներին յարակից մետաղային և այլ բղխումներ (émanations), սերումներ (ségrégations), ալլակերպումներ (métamorphisations) և այլն։

Կենդրոնական մասի երկրաբանական կազմի մէջ մասնակցում են:

Ա. — Գմբէթի զագաթից մնացած հատւածներ (strates)

Ընդհանրապէս քաօսային վիճակի մէջ և ենթարկւած այլակերպման:

Բ.—Լակկոլիթներ, դեյկեր, հոսանքներ և հալւած ներքին մագմայի այլ ժայթքումներ, որոնք կամ լիցւել են ինտրուզիվ ձեերով զմբէթի և նրա թերի ճեղքերի և դատարկութիւնների մէջ, կամ տարածւել են նրա մակերեսութի վրա, որպէս հրաբխային նիւթեր:

Այդ ժայթքումների թթւութեան գամման բաւական ընդարձակ է սկսած ամենաարմատական (basiques) տեսակներից Սեփատարի մօտ մինչև սիլիսով հարուստ ներէայցուցիչները (Կավարտ և այլն): Ժայթքումների քիմիական տարբերութիւնների պատճառները պէտք է անկատակած վնտուել հալւած ներքին մագմայի խորքերում կատարւած յաջորդական տարբերացումների (dissérenciations) մէջ: Վերջինների հետեանքները կարող են լինել ժայթքւած արմատական, չեզոք և թթու տիպերը:

Նման տարբերացումների միջոցով կարող էին տեղի ունենալ մագմայի մէջ ալիւմինա-պոտասսային սերումներ (ségrégations, liquations): Ստորին Պափանի լեռներու ուսութների հանքավայրը կարող է հետեարար բացատրւել ալիւմինա-պոտասսային ներքին սերումներից առաջացած ժայթքումներով: Վերջինների արդիւնաբերական կարենը կախված է բնականաբար նրանց ալիւմինային և պոտասսային պարունա-

Կութիւններից:

Արժանի է արձանագրութեան, որ այս հանքավայրը ալիւմինա-պոտասսային տարբերացման հզական դէպքը չէ հայտառանում: Հալւած ներքին մազմայի ոչ միևնոյն, բայց նման տարբերացումների պէտք է անշուշտ վերագրել հետեւեալ կազմութիւնների ալիւմինա-պոտասսային մասերը.

I. Երբորդական ժայթքումներ, որոնց տրախիտներով, փուտ քարերով (pierre ponce), տոփերով (tufts), սիներիտներով և այլն ծածկւած են, յաճախ ընդմիշումներով.

1. Արևմտեան բնագաւառի մէջ, հազարաւոր քառ. քիլոմետրներ Ախուրիանից (Սնի) և Լինինականի ստհմաններից մինչև ծաղկաձորի Թայչարուխ գիւղը, Արագածը, Սևանայ լճի հարաւարեւմտեան լեռնաշղթաները. Հնեվան և Դերեդ գետերի աւագանը, և

2. Արևելեան բնագաւառում, աւելի փոքր տարածութիւններ Կորիսի և Սիսիանի շրջաններում.

II. Գրանիտներ, որոնց.

1. Արևելեան բնագաւառը տարածւում է ընդմիջումներով Արաքսից (Կարճեան, (Մեղրի, Ջւանիձոր) մինչև Սիսիանի Որոտան գետը, և

2. Արևմտեան բնագաւառը; Ղաղախի Կողբ գիւղից ընդմիջումներով մինչև ծաղկաձոր, Արարան և Փամբակ:

Այդ հետաքրքիր բնագաւառների երկրաբանական
սիստեմատիկ ուսումնասիրութիւնը բացակայում է և
կը բացակայի մինչև յատկապէս այդ նպատակին
նորուած մի գիտական ձեռնաս հիմնարկութեան
(Institut) ստեղծումը երկրի կենդրոնում:

Վերջերում միայն, նրանց արդիւնաբերական
հարստութիւններից, համեմատաբար երկրորդական
և համեստ կարևորութիւն ներկայացնող տոփեր (tufts),
փուտ քարեր (pierres ponces), գունաւոր և ուրիշ
քարեր, զանազան մետազներ և այլն. տեղի են տւել
բազմաթիւ աշխատանքների, որոնցից սակայն վրիպել
են, ինչպէս առաջներում, այդ կազմութիւնների ալիւ-
մինա-պոտասսային և ալիւմինային հանքավայրերը:

Ի հաստատութիւն և որպէս մի երկրորդ օրինակ
վերջինների ներկայութեան, ես կը բերեմ այստեղ
բառինի (kaolin, 24.94% ալիւմինիում) և ֆայանսի
հողի ընդարձակ բացւածքները Սիսիանում, Որոտան
գետի աջ կողմի Հոր, Գարաբաս և հարեան գիւղերի
մօտ: Հետախուզական աշխատանքների բացակայու-
թիւնը թոյլ չէ տալիս որոշնլ այդ հանքավայրի իրա-
կան պաշարները, սակայն բացւածքների մօտ 10 քա-
ռակուսի քիլոմետր տարածութիւնը և 50—100 մետր
հաստութիւնը պատկերացնում են, այդ երեացող
տւեալների հիման վրա, վերջինների մօտաւոր կարևո-
րութիւնը հետեւեալ թւերով.

$$1,000 \times 1,000 \times 10 \times 50 \times 2.6 = 1,300,000,000 \text{ թունն:}$$

Երկրաբանական տեսակէտից, այդ պաշարների դիօքը, մի կողմից, գրանիտների և, միւս կողմից, երրորդական ժայթքումների, միջոցում ցոյց է տալիս նրանց հաւանական ծագումը այդ կազմութիւնների ֆելթսպաթների քառինացումից (kaolinisation), տարրալուծում, որը արտաքսել է նրանց ալկալալին արմատները և սիլիսի մի մասը:

Սիսիանի այդ հանքավայրը շահեկան է ալիւմինի իր հարուստ պաշարներով և որպէս ճենապակու [porcelaine] և ֆայանսի արտադրութեան մի ապագայ կենդրուն: Ներկայում, նա ծառայում է տեղում, որպէս նիւթ խըճիթների սպիտակացման համար:

Երկաթուղային հաղորդակցութեան բացակալութիւնը այդ հանքավայրի արդիւնաբերական շահագործման գլխաւոր արգելքն է:

9. Բաղմաթիւ երակներ և շեղեր, առաջ եկած ժայթքումների ջրա-ջերմկային ջղխումներից, որոնք լեցըել են խորտակումներից բացւած ճեղքերը և դատարկութիւնները, պղնձի հրաքարով և նրա ծծմբային ուրիշ միացումներով (pyrite de cuivre, cuivre panaché, chalcosine), երկաթի հրաք սրով (pyrite de fer), ծծմբային կապարով (galène), ինչպէս նաև արսենիկի, անտիմոնիումի, արծաթի բարդ միներալներով (cuivres gris): Սեփական մօտ երեսում

Են բնածին պղինձ և կուպրիտ։ Հողային միներալներից գերիշխում են կւարծը և կրային սպաթը, պայմանաւորելով մէկը թթու, միւսը արմատական լեցւածքներ (remplissages)։ Հետաքրքիր են գիպսի (gypse) խոցը շեղչերը Կավարտի մօտ։ Լեռնիտների մէջ, ծծմբային սիներալները սերկայանում են աւելի շուտ անկանոն սերումների ձևով։

Գմբէթը պերի երիկ շըջանի երակները մեծ մասամբ ասծասօլի են։ Վերջընները զազմում են, Կարագիոլ գիւղի մօտ, մը տասակ «միութսան գիծ» Դափանի և Վրկանովի մետաղաքսը շըջանների մէջ։

Ստորին Դափանի հանքավայրի շահագործման սկիզբը կարելի է որոսել պղնձը և բրոնզը գալերի նախապատմական ժամանակներում։ Կաղեմը հանգերի հազիւ նշմարելի հետքերը ծանօլի են տեղացիներն «2ըմմա» ասւամբ։ Վերջինների մեծ թրւը և մինչև 100 մետրի հասսող խորութքները վկայում են, որ այդ շըջանը եղել է Մելքանար Արևելքի պղնձի արդիւնաբերութեաս օրբաններց սէկը։ Մոսկովակաս արշաւանքները պատճառով դադարենաց յետու, պղնձը արտադրութւնը վերածւել է այդուղ 19րդ դարի յիսնական թւերին։ Խսդրկովկասում, այդ վերամշակւող հանքերը, ըրանց արտադրութան քանակներով, պատկանում են պղնձի նշանաւոր ձեռնաշըկութիւնների թւին,

իսկ իրանց պղնձաքարի բարձր տոկոսով գրաւում են նըանց մէջ առաջին տեղը:

Ընդհանուր առմամբ, 20ըդ դարի հանքային արդիւնաբերութիւնը, չը նայած իր կատարելագործութիւններին անցեալի համեմատութեամբ, բնորոշւում է իր բաւական բարբարոս վերաբերմամբ դէպի բնական հարստութիւննեցը, որոնց նա աւելի վատնում է, քան օգտագործում: Այդ տեսակէտից, բացառութիւն չեն կազմում Ղափանի հանքերը, որոնց արտադրած պղնձի, արծաթի, ոսկու, ցինկի, կապարի, անտիմոնիումի, ծծմբի, արսենիկի և այլ նիւթերի պատկառելի քանակութիւններից շահագործում են միայն առաջին երեքը, այն էլ բաւական մեծ կորուստներով: Միւսները զոհւում են ապարդիւն կերպով:

Նախ քան պատերազմը, այդ հանքերի պղնձի տարեկան արտադրութիւնը ճօճում էր երկու հազար թոննի համեստ քանակութեան շուրջը: Ներկայում, նա հասնում է մօտ 10,000 թոննի 320,000 անգլ. թուղթ պառնդ ($10,000 \times 32$), կամ 192,000 անգլ. ոսկի պառնդ մօտաւոր արժողութեան: Արտադրութեան այդ աճումը — հինգ անգամ ըստ քանակութեան և 1.75 անգամ ըստ արժէքի — որպէս հետևանք շահագործման աշխատանքների մէջ կատարւած լուրջ փոփոխութիւնների, ինչպէս նաև նոր երկաթուղագծի կառուցման (Մինչեան — Հալեր, ճիւղ Բագու — Քուլֆա գծի), անկասկած, մի խոշոր յառաջադիմութիւն է Ղափանի

հանքերի պատմութեան մէջ, սակայն նա դեռևս հեռու է համապատասխանելուց այդ հանքավայրի բոլոր կարելիութիւններին և վերջինների բացիօնալ օգտագործմանը, եթէ նոյն իսկ մոռացութեան տանք լեռսիտների ներկայութիւնը:

Հանքային աշխատանքները—հետախուզական և շահագործական—սահմանափակւած են գմբէթի կենդրոնական շրջանի մի փոքր տարածութեամբ, հօրիզոնաբար, և վերջինի միայն մակերեսութային մասերով, ըստ վերտիկալ ուղղութեան։ Մեռադագործական աշխատանքների մէջ,—բացառութեամբ կարմիր պղնձի գոտման (raffinage) և թանկագին մետաղների բաժանման,—դեռ մօւտք չեն գործել էլեկտրոլիտիկ արդիական մեթոդները, որոնք աւելի քան հալերի (fonderie) ներկայ պրօցեսը համապատասխանում են տեղական պայմաններին, արտադրութեան և վաճառման աւելի արժան գներին (վերջինները իշել են թոննը նախապատերազմական 55 անգլ. ոսկի պառնղից անգլ. ներկայ 32 թղթի պառնղի), ինչպէս նաև պարունակող ցինկի, կապարի և ուրիշ տարրերի ինտեգրալ օգտագործմանը։ Ալդ տարրերը ներկայում կորչում են հանքային նետածքների (haldes), հալերի փրփուրների (scories) և օդի մէջ։

Վերջիններից միայն ծծմբի տարեկան կռօւստը հաւասար է արտադրւած պղնձի մօտաւորապէս հնգապատիկ քանակութեանը, այն է տարեկան։

10,000×5=50,000 թոննի,

հաշւելով այդ թւի մէջ հանքալին նետւածքների մէջ
մնացող ծծումբը և հալերի արձակած ծծմբային
ծխերը:

IV. ԱՐԴԻՒՆԱԲԵՐԸՎԱՆ ՏԻԵՍԼՆԵՐ:

Ի բացակայութեան երկրաբանական, հանքային և երկրաչափական մանրամասն աշխատանքների, կարելի է փորձել մի մօտաւոր զաղափար կազմել՝ իսպահութիւնի Հափանեան հանքավայրի կարևորութեան մասին, հիմնւելով վերեց բերւած տւեալների վրա։

Բացւածքների հօրիզոնական ընդհանուր տարածութիւնը և նրանց վերտիկալ միջին հաստութիւնը համապատասխանում են, առաջինը, հինգ քառակուսի քիլոմետր և, երկրորդը, հարիւր մետր մինիմալ թւերին։ Լեռութիւնի տեսակարար ծանրութիւնը հաւասար է 2,45։ Հետեաբար, յիշեալ հանքավայրը պարունակում է մօտաւորապէս։

$$1,000 \times 1,000 \times 5 \times 100 \times 2.45 = 1,225,00,000 \text{ թոնն լեռիտ։}$$

Ալիւմինի և պոտասսի պարզնակութիւնները այդ բանակութեան մէջ, ըստ լեռութիւնի քիմիական բաղադրութեան, մօտաւորապէս, հետեւեալներն են։

Ալիւմին (Al_2O_3)	22%	269,500,000	թոնն
-------------------------------------	--------	-------------	------

Պոտասս (K_2O)	20%	245,000,000	»
---------------------------------	--------	-------------	---

Ալիւմինի 269,500,000 թոննը համապատասխանում է 148,000,000 թոնն մետաղային ալիւմինիումի։

Ջուկայի ներկայ գներով (մայիս 1935), այդ պաշարները ներկայացնում են հետնեալ արժէքները։

Մետաղային ալիւմինիումը	$148,000,000 \times 100 =$	14,800,000,000 անդլ, պառնդ,
------------------------	----------------------------	-----------------------------

Պոտասսուլ (K₂O) 245,000,000 × 25 =
 6,125,000,000 անգլ. պառանդ,

Այս թւեղի միակ նպատակն է պատկերացնել հանքավայրի մօտաւոր կարեռութիւնը: Նրա իրական պաշարների ճիշտ որոշումը ենթադրում է յատուկ աշխատանքներ:

Լեռսիտի արդիւնաբերական նշանակութիւնը հիմնած է նրա.

ա.—Սլիմինի և պոտասսի պարունակութիւնների, և
 բ.—Դիւրութեամբ թթուկների (acides) և ար-
 մատների (bases) օգնութեամբ տարրալուծելու յատ-
 կութեան վրա:

Նրա քիմիական ձևակերպումն է K₂O. Al₂O₃·4S_iO₂
 և թէօրիական բաղադրութիւնն է.

Սլիմին, Al₂O₃ 23,35%

Պոտասս, K₂O 21,50%

Սիլիս, S_iO₂ 55,15%

100,00



I.—Մշակութեան թթու մեջողներ:

Սկզբունքով, լեռսիտի տարրալուծումը թթուուկ-ների մէջ կատարւում է հետեւալ ձևով: Խոշոր կեր-պով մանրացւած լեռսիտը խառնւում է թթուուկի հետ:
 Աստիճանաբար, խառնուրդը սկսում է տաքանալ: Ներ-դործութեան վերջանալուց յետով, ստացւում են մի

հեղուկ,որի մէջ լուծւած են ալիւմինը և պոտասսոր, և մի ամուր մնացորդ կազմւած սիլիսից: Հեղուկ մասը բաժանւում է մնացորդից և ենթարկւում բիւրեղացումների (cristallisations), որոնք արտադրում են ալիւմինիումի և պոտասսիումի գանագան աղեր:



Լեռսիտի տարրալուծումների ձեակերպումները հետեւալներն են,

1. Ծծմբային թթւուկի դէպքում (acide sulfurique).





Թէօրիապէս, ըստ ծանրութեան, 100 մաս լեռսիտի տարրալուծումը պահանջում է 89.62 մաս ծծմբային թթւուկ 66°R : Ստացւում են 216.78 մաս պաղլեղ (alun) և 55.15 մաս սիլիս:

2. Ջրաքլորային թթւուկի դէպքում (acide chlorhydrique).



Թէօրիապէս, ըստ ծանրութեան, 100 մաս լեռսիտ տարրալուծելու համար անհրաժեշտ է 66.57 մաս ջրաքլորային թթւուկ (HCl): Ստացւում են 32.02 մաս քլորային պոտասսիում, 110.35 մաս քլորային ալիւմինիում և 55.15 մաս սիլիս:

3. Բօրակային թթւուկի դէպքում (acide nitrique).



Թէօրիապէս. ըստ ծանրութեան, 100 մաս լիոսիտի տարրալուծման համար հարկաւոր է 115.23 մաս բորակային թթւուկ: Ստացւում են. 159.18 մաս բորակային ալիւմինիում, 46.18 մաս բորակային պոտասիում և 55.15 մաս սիլիս:


Իրականութեան մէջ, անմաքրութիւնների և կորուստների պատճառով, արտադրւած աղերի քանակները վերոյիշեալ թւերից փոքր ինչ պակաս են լինում, իսկ թթւուկների սպառումը փոքր ինչ աւելի:

II.—Մշակութեան արմատական մեթոդներ.


Սկզբունքով. լիոսիտը տարրալուծում է արմատական մեթոդներով պոտասսի, ամմոնիակի, կրի և ուրիշ արմատների օգնութեամբ.

1. Աւտոկլավի մէջ, տաքացման և ճնշման օգնութեամբ, և


2. Էլեքտրական հալերի մէջ, ուր կրի ֆոխարէն գործ է ածում կրաքարը: Կրի հետ, աւտոկլավի մէջ, ստացւում են պոտասս և ցեմենտ (ciment), առաջինը, հեղուկ գրութեամբ, երկրորդը, ամուր դրութեամբ և կարօտ այրւելու:



Կրաքարի հետ, էլեքտրական հալի մէջ արտադրւում է մի խառնուրդ կազմւած պոտասսի ալիւմինատից և կրային սիլիկատից.



Ճրի օգնութեամբ, առաջինը լուծում է, բաժանելով երկրորդից: Քամւելուց յետոյ (filtration), հեղուկ մասը ենթարկում է ածխալին թթուուկի [CO_2] հոսքների ազդեցութեանը, որից պոտասսի ալիւմինատը տարբալուծում է, տալով ամուր ալիւմին և լուծած պոտասսիումի կարբոնատ, որոնք բաժանում են միմիանցից քամւելով:



Հեղուկ մասի գոլորշիացումից արտադրում է պոտասսիումի կարբոնատ:

Լեռսիտների մշակութեան թթու և արմատական մեթոդները և նրանց տեխնիկական գործադրութեան մանրամասնութիւնները առաջ են բերել բազմաթիւ աշխատանքներ, որոնց թւում աւելի քան 24 միայն իտալական և ֆրանսական արտօնագրեր (brevets), չը հաշւելով «վերապահւած» տւեալները: Այստեղ ես բաւականանում եմ այդ աշխատանքների կարճ յիշատակութեամբ: Հատուրներ են պէտք նրանց ամփոփելու համար:

Լեռսիտների հանքավալրի գուգաղիպումը Ստորին Հավանում ծծմբային հոչակաւոր պղնձահանքների հետ ներկայացնում է, յօգուտ առաջինների շահագործման,

մի խոշոք առաւելութիւն, որից զգկատ են իտոլական լեռսիտները

Այդ պղնձահանքերը և նրանց հալերը ապար-
դիւն կերպով վատնում են ծծմբի ահագին քանակու-
թիւններ, որոնց վերածումը (transformation) ծծմբա-
յին թթւուկի (acide sulfurique) թոյլ կը տայ արժան
գնով տարրալուծել լեռսիտի համապատասխան պա-
շաշըներ: Մօտաւոր հաշով, արտադրող պղնձի, վատ-
նուղ ծծմբի և վերջինին համապատասխանող ծծմբա-
յին թթւուկի (66° Բ) տարեկան թւերը կարող են ներ-
կայացւել հետեւել կերպով.

Նախքան պատերազմը, տարին, 2,000 թոնն պղինձ,
10,000 թոնն ծծումբ, 30,000 թոնն ծծմբային թթւուկ
 66° Բ.

Ներկայում, տարին, 10,000 թոնն պղինձ, 50,000 թոնն
ծծումբ, 150,000 թոնն ծծմբային թթւուկ 66° Բ.

150,000 թոնն ծծմբային թթւուկը (մայիս 1935 գնե-
ռով) համապատասխանում է 720,000 անգլ. պառնդ
տրժէրի:

Արդ, թէօրիապէս մի թոնն լեռտիտի տարրալուծումը
պահանջում է 0,896 թոնն ծծմբային թթւուկ 66° Բ,
կամ մի թոնն, կլոր թւով:

Հետեւաբար, ծծմբի ներկայ արտադրութիւնը
թոյլ կը տայ տաշըլուծել տաշեկան 150,000 թոնն
լեռսիտ և ստմնալ 300,000 թոնն պատասխի և ալիւմի-
նի ազեր (պալիկ, alun), կլոր թւով (2 թոնն փրկս ս-

թէն թէօրիական 2,167 (թոննի), որոնք շուկայի ներկայ գներով (մայիս 1935), ներկայացնում են.

$300,000 \times 6 = 1,800,000$ անգլ. պառնդ արժողութիւն:

Մինչդեռ միևնոյն հանքերի պղնձի տարեկան արտադրութեան արժէքը հազիւ է հասնում.

$10,000 \times 32 = 320,000$ անգլ. պառնդի:

Եթէ, փոխարէն պաղլեզի, նկատողութեան առնենք մետաղային ալիւմինիումի և պոտասսի արտադրութիւնները, վերջինների քանակները և արժէքները կը համապատասխանեն հետևեալ թւերին.

Ալիւմինիում մետաղ, 10% $15,000$, թոնն $\times 100 =$

$1,500,000$ անգլ. պ.

Պոտասս, K₂O, 20%

$30,000$ թոնն $\times 25 =$

$750,000$ անգլ. պ.

Գումար $2,250,000$ անգլ պ.

Նախընթաց տւեալներից կարելի է եզրակացնել, որ խոշոր յուածադիմութիւն կատարւած կը լինի Ստորին Ղափանի բնական հարստութիւնների շահագործման մէջ, եթէ պղնձի հետ ներկայում նրա հանքերից արտադրող բազմաթիւ նիւթերից միայն մէկը, այն է, ծծումբը, փոխանակ վատնւելու, գործադրութմբային թթւուկ պատրաստելու լեռսիտների տարբալուծման համար: Սկզբում, այդ բարեկաւման կառու-

ցումները կարող են ծրագրւել ծծմբի այժմ արտադրութ քանակների հիման վրա, ի նկատի ունենալով, սակայն, որ վերջինի և լեռսիտի բնական պաշարները Ղափանում գործնականապէս անսպառելի են։ Հետեաբար, լայն ասպարէզներ են վերապահած այդ գաւառում ալիւմինիումի և պոտասսի արդիւնաբերութիւնների առջե։

Ցիշատակութեան արժանի մի առաւելութիւն ևս ներկայացնում է ալիւմինիումի զուգաղիպութիւնը Ստորին Ղափանում պղնձի հետ, այդ մնացների գործածական խառնուրդների տեղական արտադրութեան տեսակէտից։ Գիւրալիւմին (Duralumine), բրոնզ (Bronze) և ուրիշ խառնուրդներ (alliages)։

Լեռսիտի բաղադրութեան մէջ, բացի ալիւմինից և պոտասսից, մասնակցում է սիլիսը, որը, թէև չէ պատկանում շուկայի ընթացիկ ապրանքների թիւն, կարող է սակայն գործածւել զանազան արտադրութիւնների մէջ։

1. Նրա ուղղակի գործադրութիւններից ամենահետաքրքիրը, հիմնած նրա անգունացնող (décolorant) լատկութեան վրա, պէտք է անշուշտ համարել նաև այլ բազմաթիւ արդիւնքների և, ընդհանրապէս, իւղերի անգունացման և զտման (raffinage) գործողութիւնները։ Բագուն և նաև այլ խօշոր արդիւնաբերութեան միւս կենդրոնները սպառում են այդ նպատա-

կով հեռուից քերւող հողեր (Fuller's earth), ոլոնք, անզունացման տեսակատից, աւելի թուլ են քիմիապէս ստացւած սիլիսից (gel de silice).

2. Քիմիական սիլիսը կարող է սպառել մեծ քանակութեամբ, որպէս հում նիւթ, տեղում ապակի արտադրելու համար և, իր մաքրութեան պատճառով, բարձր յատկութիւն ունեցող ապակիների (cristallerie) պատրաստութեան համար:

3. Վերջերում, խճուղիների կառուցման մէջ գործածութիւն է ստացել լուծող ապակին (verre soluble), որի արտադրութեան համար քիմիական սիլիսը կը ներկայացնի առանձին դիւրութիւններ:

4. Պղնձի մետաղագործութեան մի քանի մասերում և այլն:

Ղափանի բնական հարստութիւնների մէջ կարենք տեղ են զբաւում նըա զետերը, որպէս աղբիւր ջրային էներգիայի, որը կոչւած է փոխարինելու լեռնիտի և ուրիշ արդիւնաբերութիւնների համար այդ գաւառում բացակայող հանքալին վառելիքը:

Այդ զետերի ջրերի քանակները (débits), վերջինների սեզոնային փոփոխութիւնները, նըանց կուտակման (accumulation) և կանոնաւորման (régularisation) պայմանները չեն ուսումնասիրւած մանրամասն կերպով: Հետեւեալ թւերը կարող են մօտաւոր մի գաղափար տալ Ղափանի և նըա անմիջական շրջակայքի

Հինգ գետերի ջրային հում զօրութիւնների մասին.

1. Ղափան-Օխչէ-Հղուր-Չաւնդուր

125,000 ձիի ոյժ — 0,0332 թափ [pentes].

2. Մեղրի 100,000 > > 0,0721 >

3. Բասուտ 25,000 > > 0,0621 >
=

4. Բարգուշատ-Որոտան-Բաղար

200,000 » > 0,0188 >

5. Արաքս 400,000 » > 00,008 >

Դումարը 850,000 ձիի ոյժ.

Ճահագործման տեսակէտից, ջրային ալս կարեռը զօրութիւնը գտնում է վերին աստիճանի նպաստաւոր պայմանների մէջ, շնորհիւ համապատասխան գետերի մեծ, յաճախ «հեղեղային», թափերին (pentes): Ներկայում այդ ուժից չէ շահագործում անգամ 1—2 տոկոս: Իր առատութեամբ և արժանութեամբ, նա կը ներկայացնի Ղափանում մի խոշոր առաւելութիւն ալիւմինիումի մետաղագործութեան համար, որի էլեքտրո-հալերը, միջին թւով, սպառում են հինգ ձիի ոյժ-տարի էներգիա ամեն մի թոնն ստացւած մետաղի համար:

Հետևաբար, տարեկան 15,000 թոնն մետաղային ալիւմինիումի էլեքտրո-մետաղագործութիւնը կը պահանջիր.

15,000 × 5 = 75,000 ձիի ոյժ զօրութիւն, կամ վերոյիշեալ հինգ գետերի ջրային զօրութեան հագիւ-

10 տոկոսը:

Լեռսիտների մշակութեան տեսակէտից, ջրային
էներգիայի առատութիւնը և արժանութիւնը նպաստա-
ւոր պայմաններ են սինթետիկ ամմոնեակի և բորա-
կային թթւուկի (acide nitrique) արտադրութեան
համար Ստորին Ղափանում Haber, G.Claude, Cazale
կամ ուրիշ մեթոդներով։ Արագօքն աճելոց յետոյ,
այդ արդիւնաբերութիւնը գտնւում է այժմ եւրոպայի
մէջ «գերարտադրութեան» դժւարութիւնների առջև։
Բայց, հաւանաբար, միևնոյն դժւարութիւնները գոյու-
թիւն չեն ունենայ Ղափանի պայմաններում, ուր այդ
սինթետիկ նիւթերը կոչւած են տեղում իսկ սպառւե-
լու, լեռսիտների տարրալուծման համար թթու կամ
արմատական մեթոդներով, և «բարդ պարարտացուցիչ-
ներ» արտադրելու համար պոտասսի հետ։ «Պարզ» ան-
ւանում են այն պարարտացուցիչները, որոնք գլխաւոր
երեք տարրերից, — ազոտ, պոտասս, ֆոսֆոր, — պարու-
նակում են միայն որ և է մէկը։ «Լիակատար պարար-
տացուցչի» (engrai complet) մէջ կտնւում են բոլո-
րը։ Որպէս նորագոյն կատարելագործութիւններ, բարդ
և լիակատար պարարտացուցիչները վայելում են շու-
կայի գերադասութիւնը։ Արդ, եթէ ազոտը ներկայ է
ողի մէջ ամեն տեղ, միայն սակաւածիւ երկրներում
են պատահում պոտասսի և ֆոսֆորի հանքավայրերը,
այն էլ, ոչ միասին։ Հետարքիք է, որ ապատիտի

[Apatite, fluo-phosphate de chaux] հանքավայրերի
բացւածքները Հայաստանի գրանիտային բնագաւառ-
ներում իրաւունք են տալիս արձանագրելու «լիակա-
տար պարարտացուցչի» բոլոր հում նիւթերի զուգա-
դիպութիւնը մեր փոքրիկ երկրում։ Սակայն, լեռսիտ-
ների նման, ապատիտի հանքավայրերը նոյնպէս վրի-
պել են դիտողութիւնից և մնում են առանց հետա-
խուզումների։

Լեռսիտների արգիւնաբերութեան արդիւնքների
տեսակէտից, որպէս ալիւմինի տեղական սպառման
շուկայ, արժանի է յիշատակութեան նաև ալիւմինային
ցեմենտների (ciments alumineux) արտադրութեան
կարելիութիւնը Ղափանում։

ՀԵՂԻՆԱԳԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԻԱՆ
ԱՇԽԱՑԱՆՔՆԵՐԸ

1. Découverte de couches à Hippurites [Rudistes], près Dilijan, Arménie. «Bulletin de la Société Géologique de France», 1901.
2. Էջմիածնի ստորերկրեալ ջրերը (ռուսերէն), առանձին հրատարակութիւն, 1912:
3. Արզաքինդի հանքային հարստութիւնները (ռուսերէն), առանձին հրատ., 1913:
4. Գանձասարի պղնձահանքերը (ռուսերէն), առանձին հրատ. 1914:
5. Ծալկայի աղբիւրները [Թիֆլիս քաղաքի համոր], ռուսերէն, «Վաւկազ» լրագիր և առանձ. հրատ. 1913:
6. Երկաթուղիները և քարածուխը Հայաստանում, «Աշխատանք», 1919.
7. Նախագիծ Արաքսի սկառտարի (barrage) Երևանդաշտի (Ղարաղալա) մօտ, 1919.
8. The Economic Situation of Armenia, «The Asiatic Review», 1920 April, և առանձ. հրատ.
9. Armenia's Mining Resources, 1920, «The Near East», June 1920, և առանձ. հրատ.
10. Armenia's Hydraulic Resources, 1920, «The Near East», August, 1920 և առանձ. հրատ.
11. Les Gisements Pétrolifères de l'Anatolie, «La Revue Pétrolifère», le 16 Juin 1923.
12. Les Gisements Pétrolifères de l'Asie Mineure, de la Perse et des Régions Limitrophes, «La

- Revue Pétrolifère», le 27 octobre 1923. Թարգմանութեամբ արտասպանած «The World Petroleum», Բազուի նալթային հանդիսի մէջ և այլն:
13. Հայաստանի Սպիտակ Ածուխը, «Ապագայ», 7 Ապրիլ 1923:
 14. Հայկական Հանքապետութեան Հանքային Հարստութիւնները, բանախօսութիւն, 1924, «Ապագայ» 1—8 Ապրիլ, «Պայքար»:
 15. Données sur les Richesses Minérales du Nord de la Perse, «La Revue des Combustibles Liquides», 1927, 50.
 16. Les Zones Pétrolifères de la Perse, le 19 Juillet 1930, „La Revue Pétrolifère“.
 17. Հայաստանի լեռնիտները, 1932, առանձին հքատակութիւն:
 18. Ելիւմինիումը Հայաստանի մէջ, առանձին հքատակութիւն, 1935:

Վ Ր Ե Պ Ա Կ

Տպագրական կարևոր սխալների:

Տպագրւածի փոխարէն պէտք է լինի էջ 31-ի մէջ.

Տող 1. $K_2O \cdot Al_2O_3 \cdot 4 SiO_2 + 8 CaCO_3 =$

,, 2. $K_2Al_2O_4 + 4 (2 CaO \cdot SiO_2) + 8 CO_2$.

,, 10. $K_2Al_2O_4 + CO_2 + 3H_2O =$

,, 11. $Al_2O_3 (3H_2O) + K_2O \cdot CO_2$



9237